Freunde des Volkes von Arzach (Karabach) e.V.

Արցախի Ժողովրդի Բարեկամների Միություն

Adresse / Հասցէ
Dahlmannstr. 15
D – 10629 Berlin
Email: info@hayastan.de

Բեռլին, 02.10.2010

Հարգելի բարեկամներ,

Ս.թ. հոկտեմբերի 6-10-ը Ֆրանկֆուրտում կայանալիք Գրքի միջազգային ցուցահանդեսին նախատեսվում է Արցախի անդրանիկ մասնակցությունը սեփական տաղավարով, որի նախաձեռնությունը պատկանում է Արցախի բարեկամների միություն ՀԿ-ին և ԼՂՀ Մշակույթի նախարարությանը: Ցուցադրման համար նախապատրաստվել են հայ և օտարազգի հեղինակների ավելի քան 40 կարևորագույն գրքեր ու ուսումնասիրություններ, այդ թվում՝ 12 նորընծա հրապարակումներ, ինչպես նաև հինգ տեսահոլովակներ, որոնք համակողմանիորեն ներկայացնում ու լուսաբանում են Արցախի պատմությունը, մշակույթը և քաղաքական-հասարակական կյանքի զանազան կողմերը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Ցուցահանդեսում Արցախը ներկայացված է «*Հայկական գրի ու մշակույթի օրրան*» նշանաբանով:

Վերջերս ԼՂՀ Արտաքին գործոց նախարարությունը ստանձնեց ցուցահանդեսում Արցախի տաղավարի ներկայացման միանձնյա պատասխանատվությունը՝ մեր միությանը և ԼՂՀ Մշակույթի նախարարությանը պաշտոնապես ազատելով այդ պարտականությունից:

Օգտվելով առիթից, իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում մեր բոլոր գործընկերներին՝ տաղավարի կազմակերպման աշխատանքներին ցուցաբերած անգնահատելի աջակցության համար: Միաժամանակ հաջողություն եմ մաղթում ԼՂՀ Արտաքին գործոց նախարարությանը՝ այս պատվախնդիր ու կարևոր առաքելությունը ըստ պատշաճի ավարտին հասցնելու գործում:

Ցուցահանդեսին ներկայացվելիք նյութերից մի քանիսի հեղինակների խնդրանքով կից Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում հեղինակների կողմից վաճառքի ներկայացված գրքերի ու հրապարակումների ցանկը, որոնց ձեռքբերման համար կարող եք դիմել մեր միությանը՝ info@hayastan.de հասցեով: Ցուցահանդեսի շրջանակներում նախատեսվում է այս գրքերից մեկի՝ օրերս գերմաներեն լեզվով լույս տեսած «*Լուծումներ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) համար. ինքնորոշումից դեպի ճանաչում*» վերնագրով ժողովածուի շնորհանդեսը (տես՝ ներդիրը), որը տեղի կունենա հոկտեմբերի 7-ին, ժամը 9.30-10.00 (Messegelände, 6.1 E913, Forum Dialog).

Լավագույն մաղթանքներով՝
Գայանե Ափինյան
Արցախի բարեկամների միության նախագահ, Բեռլին, Գերմանիա